ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/32507-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի (Կ-874-25.06.2024-ՊԱ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Առաջարկում ենք հետևյալը.

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծում՝

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օրենքի 2-րդ հոդվածը բաղկացած է բազմաթիվ պարբերություններից, առաջարկվում է հստակեցնել դրույթի հղումը և նշել, թե օրենքի 2-րդ հոդվածում կոնկրետ որտեղ է լրացվում Նախագծի 1-ին հոդվածով նշված նախադասությունը:
   Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.
   «Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում «արգելվում է» բառերից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «. » կետադրական նշանով, որից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.
   անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոց՝ մեկ կամ մի քանի անիվ (գլանափող) ունեցող տրանսպորտային միջոց, որը նախատեսված է էլեկտրական շարժիչի օգտագործմամբ մարդու անհատական տեղաշարժման

համար (էլեկտրական սկուտեր, էլեկտրական սքեյթբորդ, գիրոսկուտեր, սեգվեյ, միանիվ և այլ նմանատիպ միջոցներ):»:

2. Դրույթի իմաստային ամբողջականությունն ապահովելու համար՝ առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 24. 4. -րդ հոդվածի 7-րդ մասի 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.
   «11)անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը վարել թունելներում»:»
3. Նախագծի 4-րդ հոդվածում առաջարկում ենք շտկել հղումները, որոնք կատարվում են Նախագծի 3-րդ հոդվածի 9-րդ մասին՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 3-րդ հոդվածը չունի 9-րդ մաս, իսկ 9-րդ մաս ունի այդ հոդվածով Օրենքում լրացվող 24.4-րդ հոդվածը: Այս դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում՝

Առաջարկում ենք նախագծի 6-րդ հոդվածում շտկել հղումները, որոնք կատարվում են նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասին՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախագծի 3-րդ հոդվածը չունի 3-րդ մաս, այլ՝ 3-րդ մաս ունի այդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 131.1-ին հոդվածը: Այս դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ